ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԹԵՄԱՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԵՐԿՈՒ ԱՆՏԻՊ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ավ. Իսահակյանի քնարերգության մեջ Սասունի կոտորածներից հետո սկսված ազգային-ազատագրական պայքարը նշանավորում է մի նոր շրջան, երբ նա գրում է թուրքական բռնապետության դեմ ծավալվող համաժողովրդական շարժմանը նվիրված և հայրենասիրական բուռն պաթոսով տոգորված բանաստեղծություններ, որոնք իրենց նախադեպը չունեին հայ գրականության մեջ: Իսահակյանը իրավամբ դառնում է հայ հերոսամարտի երգիչը՝ ստեղծելով ֆիդայական շարժմանը և նրա առաջնորդներին ձոնված ոգեշունչ երգեր, որոնք ամփոփվեցին «Հայդուկի երգեր» շարքում:

Իր անտիպ գրառումներից մեկում բանաստեղծը նկատում է. «Հերոսների երգող գուսանը պետք է գործի հերոս չլինի, այլ մտքի, խոսքի, գաղափարի հերոս: Դանտեն հերոս էր, Նիցշեն հերոս էր, բայց ոչ Գարիբալդիի պես, այլ ուրիշ»[1]: Այս մտքին երկրորդում է նրա «Գողթան քնարը, որ ազատության...» պոեմի բնաբանը՝ «Սազը չի թողնում, որ կտրիճ դառնամ, Թուրը չի թողնում, որ գուսան դառնամ», սակայն, չնայած դրան, հայ ազատամարտիկներին երգող բանաստեղծը, ի տես իր ժողովրդի նկատմամբ կիրառվող բռնությունների ու ոճիրների, ելք է որոնում՝ դրանք հաղթահարելու ու վերացնելու և, գրական ու քարոզչական աշխատանքին զուգահեռ, նետվում է նաև քաղաքական պայքարի ասպարեզ՝ ցարական իշխանությունների կողմից ենթարկվելով հետապնդումների, հալածանքների և խուզարկությունների, որի արդյունքում նա բանտարկվում է և աքսորվում:

Հայոց հերոսամարտին իր գործուն մասնակցությունը բերած երիտասարդ բանաստեղծը, անհուն ցավով պատկերելով արյան մեջ խեղդված իր դրախտային հայրենիքը և թուրքական լծի տակ հեծող ժողովրդի ոգորումները, չի հուսալքվում և լավատեսորեն գծում է իր երազած հայրենիքի պատկերը՝ «մի կտոր անկախ հող», որի համար նա պատրաստ է հերոսանալու, դառնալու գերմարդ, որը, հայրենասիրության երգն իր սրտում ամբարած, կլուսավորի ժողովրդի ուղին դեպի երջանիկ ու ապահով հանգրվաններ: «Ես ուզում եմ

1 Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Ավ. Իսահակյանի արխիվ (այսուհետև՝ ԱԻՖ), 1 - II բ, 25:

արծիվ լինել, ես չեմ ուզում սոխակ լինել,- 1895-ին գրում է երիտասարդ բանաստեղծը,- ես հերոս եմ...[1]: Հանուն ազատ ու ներդաշնակ հայրենիքի նա իրեն կոչված է համարում մարդկանց մեջ սերմանելու հայրենասիրական զգացումներ, ստեղծագործելու, քարոզելու արդարություն և հավասարություն, վառվելու սուրբ գաղափարներով և որպես հասարակ զինվոր՝ իր արյունը խառնելու իրենց կյանքը հայրենիքին նվիրած մարտիկների արյանը, քանի որ, ըստ նրա, «Չարժե ապրել քնքուշ կյանքով,- չարքաշ կյանք և կռվի մեջ՝ մահ...»[2]:

Թշնամուն կործանիչ հարված հասցնելու համար ժողովրդի ցասումը պետք է ուղղել դեպի համընդհանուր ազատամարտի հուն, որի համար անհրաժեշտ են առաջնորդներ՝ «սուրբ ճշմարտության խոսքը» կրողներ, որոնք իրենց կյանքի գնով արդարության և «գեղեցկի, բարվո պատգամները» կհասցնեն բոլորին: Բանաստեղծն իր մեջ զգում է այդպիսի հզոր ուժ: «Կմտնեմ գործելու,- գրում է նա իր օրագրում նույն՝ 1895 թվականին,- կտանջվեմ ժողովրդի մեջ, նրա հետ, նրա ցավով, լացով ու վշտով: Օ՜, եթե կարողացա, վերջը կշաչեմ ժողովրդի վրայով - արևի ու ամպի նման...

Այժմ կգնամ ժողովրդի միջով, հետո ժողովրդի վրայով a la Nietzsche. Այսպես - ես կմտնեմ ժողովրդի մեջ՝ մարդկային մեծ գաղափարներով տոգորված... կկռվեմ, կմեռնեմ...»[3] (նկատենք, որ Գերմանիայում ուսանելու տարիներին Ավ. Իսահակյանը հանգամանորեն ուսումնասիրել է գերմանական փիլիսոփաների աշխատությունները՝ տարվելով Շոպենհաուերի և Նիցշեի գաղափարախոսությամբ և հատկապես վերջինիս՝ Գերմարդու ֆենոմենով): Եվ բանաստեղծը իր մեջ հսկայական ուժ է զգում՝ դառնալու «հենի» (հանճար), որն ի զորու է իրագործել մարդկության իղձերն ու տենչերը: Նա հավատացած է, որ իր գաղափարակից ընկերների հետ կարող է դառնալ այն ուղեցույց ջահը, որ համախմբելով բյուրավոր մարդկանց՝ կառաջնորդի նրանց՝ «վեհ, վսեմ ցնորքներով սլանալու» դեպի երազանքների լուսավոր հորիզոններ:

Տիեզերական այս «ցնորական» ծրագրերի մասին է խորհում Ավ. Իսահակյանը 1897 թ. իր մարտական ընկերներին հղած հետևյալ ուղերձում[4].

ՆՎԵՐ ԻՄ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Իմ սիրելի ընկերներ, բյուր - հազար մարդկանց հետ ապրում ենք երկրի վրա, բայց մենք օտար՝ ենք նրանց համար, նրանց սրտերը փակ են մեզ համար:

---

1 Ավ. Իսահակյան, Հիշատակարան, Եր., 1977, էջ 164:
2 Նույն տեղում , էջ 106:
3 Նույն տեղում, էջ 190:
4 ԳԱԹ, ԱԻՖ, 8 - I, 22 - 25:

Խոլոր ու խոժոռ հայացքներով նրանք նայում են մեզ ու անցնում, գնում...

Նրանք չգիտեն, թե մենք ո՞վ ենք, ուրտի՞ց կուգանք, ո՞ւր կերթանք և ի՞նչ ենք ուզում... Նրանք այդ չեն էլ ցանկանում իմանալ, բայց ի՞նչ - թող չիմանան...

Այդ բոլոր մարդկանց մենք մասնակից ենք անում տիեզերքի մեծ կյանքին: Բայց մենք օտար ենք նրանց համար, նրանք գոց ու փակ են մեզ համար, և մենք մենակ ենք այդ բյուր - հազարի մեջ:

Եվ մենք՝ որպես ծովի հուզված ալիքներ, դուրս հոսեցինք ափերից. հեռո՛ւ, անհայտ անկյուններից իրար հանդիպեցանք, իմ ընկերնե՛ր, իրար ծանաչեցինք, միացանք իրար հետ - և միասին գնացինք... վերջը դարձյալ թափվեցինք ծովը... և ծովն է ժողովուրդը, և նրա կյանքը կատաղի կռիվ է: Այս մարտի դաշտում սե՛ր չկա, ո՛չ ոքի կուրծքը անկեղծ չի բախում ուրիշի համար: Խորին մռայլն է այնտեղ փռված, այնտեղ զոհի, տանջվողի, զրկվողի վրա է բախտավորների երջանկությունը բազմած:

Եվ այսպե՛ս, իմ սիրելի ընկերնե՛ր, կամ թո՛ղ մենք միասին միշտ հոսենք մեր ընթացքով ծով-ժողովրդի մեջ՝ նրա խորքով ու վրայով, երգենք միասին վեհության ծոխ երգերից, երազենք սուրբ, վսեմ ցնորքներով և տանջվենք մաքուր, բարձր վշտերով.- և նրանց սերը վառենք մերի հետ, հալենք մերի մեջ:

Կամ թո՛ղ մենք բարձրանանք երկինք, լինենք մռայլ-ամպեր, որոտումով ահեղ կայծակներ թափենք երկնուց ծով-ժողովրդի խորքը. հուզենք, մրրկենք նրան - այդ հուզմունքից կմաքրվի ծով-ժողովուրդը, նեխված, հոտած դի ու գեշերը իրենից հեռո՛ւ, հեռո՛ւ կշպրտե...

Կամ թո՛ղ բաժանվենք իրարուց, մի՞շտ բաժանվենք. հեռանանք հեռո՛ւ ափեր, անծանոթ վայրե՛ր, բայց միշտ ապրենք իրար սրտերի մեջ - և այդ նվիրագործենք մեր վեհ երգերի, ցնորքների ու վշտերի անմոռաց զգալով ու հիշատակով...

Էյ վա՜խ, իմ ընկերնե՛ր, անհայտ է ապագայի միտքը, խորհրդավոր է նրա դեմքը - գնանք անվախ առաջ, լող տանք, թռնենք մեր բախտի կամքով...

Գիտե՞նք,- կռվի դաշտն է մեր առջև փռվելու. թո՛ղ որ փռվի - և ով որ մեզնից ընկնի ապագայի մեր աներևույթ թշնամու հարվածից, թո՛ղ ընկնի, թո՛ղ որ կորի նրա գերեզմանը. չէ՞ որ մերոնցից կան դեռևս - և մենք կանք: Մենք միշտ կապրենք իրար սրտերի մեջ, և ընկնողի արյունը հուր կդառնա դեռ մարտնչողի սրտում, ընկնողի գերեզմանը վերք կլինի դեռ մարտնչողի սրտում. մեր մարտնչողների սրտում կլինի մեր ընկերների սուրբ գերեզմանը:

Է՜խ, եթե մեր ուղիները տարիներ հետո իրար դիպնին, և մենք հանդիպենք իրար - և մենակ լինինք, հաղթված, թույլ ու հիվանդ, է՜հ, թո՛ղ որ լինինք. մենք անհուն կարոտով կգրկենք իրար, կհամբուրենք ու կարտասվենք... ու միասին կթափառենք: Մենք նորեն կերգենք մեր հին, վեհ երգերը, նորեն կտանջ-

վինք մեր հին վշտերով, նորեն կթևավորինք մեր հին ցնորքներով.- և այդպես կթափառենք երկրի ոլորտում, կորոնենք մեր կորած ընկերներին, կորոնենք նրանց սուրբ ոսկորները...

Ա՛խ, մենք լավ գիտենք, որ մարդիկ շնչող ժայռեր են, որ ո՛չ ոք չի ցավում ուրիշի ցավով, ուրիշի ջերմով ո՛չ ոք չի ջերմում - և մենք էլ անտուն ենք, խեղճ ու անպաշտպան... Բայց թո՛ղ այդպես լինենք. անհուն սիրով ամուր կգրկենք իրար, հոգնած գլուխներս կթեքենք մի ժայռի կտորի, մի ծառի արմատի վրա - և բյուր-հազար մարդկանց մեջ մենակ՝ մենք միասին կջերմենք բոլոր մարդկանց ջերմով, նրանց վշտով կտանջվենք և կապրենք տիեզերքի մեծ կյանքով...

Օ՜, իմ անգին ընկերներ, ճշմարիտն եմ ասում. այդ է մեր իսկական փառքը:

Եվ ահա՛ այսպես առա՛ջ գնանք, իմ սիրելի ընկերներ, և մեր վեհ, վսեմ ցնորքներով սլանա՛նք...

Ստորև ներկայացնում ենք Ավետիք Իսահակյանի վաղ շրջանի մի քանի անտիպ բանաստեղծություն, որտեղ արտացոլված են ոչ միայն նրա ցավն ու կսկիծը՝ ի տես խոշտանգված ու արյունաքամ հայրենիքի, այլև «լույսի մարտիկ» բանաստեղծի աներեր հավատը՝ անձնուրաց պայքարով հասնելու բաղձալի արդարության և ճշմարտության.[1]

* * *

Երես ծածկած՝
Մեր Մայր Արաքս արուն կուլար...
Վասպուրական - մոխիր դառած,
Մեր քաջերի - նոր գերեզման,
Սուրբ գերեզման՝ սև մզրուքը ընկած վրան,
Էն խորոտ ծովն՝
Աչք Բզնունուն - կարմիր արուն,
Աղբրած արուն թերթիչներուն՝
Ալ ափերուն... լուռ կիևար.
Մարմանդ հովը ծովու վրան
Տխուր կուլար...[2]

---

1 Այս բանաստեղծությունները (մասամբ սևագիր և անավարտ) գրված են մի շնչով, անմիջական հույզերի ազդեցությամբ և, թերևս, ոչ միշտ են ենթարկված վերջնական մշակման, ինչը, սակայն, չի խաթարում նրանց գեղարվեստական արժեքը:

2 ԳԱՌ, ԱԻՖ, 181 - II:

* * *

Պայքար, մաքառում՝ դաժան, անհաշտ,
Ամենուր, ամեն ժամ արցունք, տառապանք,
Ցավ, խոշտանգություն ամենուր, ամեն ժամ -
Պատերազմ, պատերազմ՝ ահեղ, սոսկալի,
Արյուն, արյուն, արյուն՝ տիեզերքը մինչև առանցքը
Թաթախված արյան մեջ, արյան մեջ, արյան մեջ:

Գոյության կռիվ՝ կյանքի համար մահ,
Գոյության կռիվ ողջ տիեզերքում...[1]

* * *

«Ճշմարտությունը խոսի՛ր այս աշխարհի հզորների առջև»
Զենդ - Ավեստա

Ճշմարտությունը մի հատ է միայն,
Եվ նա իմ մեջն է - անոթն եմ նորա.
Լեզվակը զանգի տիեզերական
Իմ մեջն է հնչում - բարբառն է նորա:
Մոլորության մեջ սուզված են մարդիկ,
Եվ ստության մեջ աշխարհն է նիրհում -
Դուրս եկ, մարգարե, դու լույսի մարտիկ,
Դու արդարության քարոզ աննկուն:
Հրեղեն խոսքով, ինչպես սուր սայրի,
Կանգնի՛ր աշխարհիս հզորի առաջ,
Թող բռնակալի ճակատը այրի
Սուրբ ճշմարտության բոցով աննվաճ:
Եվ արիասիրտ, և ձայնով խրոխտ
Գեղեցկի, բարվո պատգամներն ասա՛
Եվ մի՛երկնչիր. անկի՛ր անհողդողդ
Կատարելության մեծ շավղի վերա...[2]

---

1 Նույն տեղում, 147 - II:
2 Նույն տեղում, 7 - II, 14:

* * *

Իմ հայրենիքին կարոտ մնացի.-
Օտար աշխարհում, խեղճ որբի նման,
Անտուն ու անտեր լուռ թափառեցի,
Մեն-մենակ, անոք ու անօգնական:

Իմ հայրենիքի դարդովն ապրեցի,
Անմասն օտարի փայլին ու փառքին.
Սուրբ հայրենիքիս կարոտ մնացի.-
Կարո՜ղ մայրենի սրտաբուխ խոսքին:

Իմ սիրտն այնտեղ է, ուր բարձրագմբեթ
Լեռներն են հսկում այն երկրի վերա,
Ուր եղնիկները արծիվների հետ
Անդունդից անդունդ թռչում են անահ:

Մայր իմ ժողովուրդ, դեպի քեզ կգամ,
Կգամ դեպի քեզ, հայրենի աշխարհ.
Ինչ որ վեհ ունիմ, սիրով ձեզ կտամ,
Եվ սիրտս, կյանքս՝ միայն ձեզ համար:

Եվ մահը երբեք ձեր կյանքի սիրուն
Դառն չի թվա, չի թվա ինձի.
Ցանր չի լինի այն հողը վերաս,
Որն այնպես անհուն ես սիրում էի...[1]

Վերը ներկայացված բոլոր այս բանաստեղծությունները իրենց արժանի տեղը կգտնեն մոտ ապագայում հրատարակվող Վարպետի երկերի ակադեմիական հրատարակության երկրորդ (անտիպ բանաստեղծությունների) հատորում:

1 Նույն տեղում, 146 - II: